Ամենից հետաքրքրականը չորրորդ երեան է (Պատկեր 48), ինչպէս Օձունի յուշարձանի վերայ տեսանք, քառանկիւնիների մէջ զծագրական, կենդանական եւ մարդկային քանդակներով եւ բազիլիկ ոճին յատուկ ձեւի խաչաքանդակներով: Ներքեւից դէպի վեր առաջին երկու քառանկիւնիները խպառ փչացած են, երրորդի մէջ հաւասարակող խաչ է, թեւերի ծայրերին ներսի կողմից մի մի գնդակ, որ երեւան են գալիս Ե.–Զ. դարերի խաչերի վերայ, որ առիթ կ'ունենան բացատրելու: Անկիւններից մի մի կոթաւոր ականթ, որ յաճախ պիտի տեսնենք դերեզմանական ուրիշ կոթողների վերայ: Հինգերորդը քառանկիւնու մէջ երկրաչափական, եռագիծ մի հիւսուածք է, կրկնուած եւ տասներորդ քառակուսու մէջ, որոնց ձեւը կը տեսնենք Թալինին նուիրուած գլխի մէջ: (Պատկ. 78 եւ 81): Վեցերորդը մի կենդանի է, ձիու նմանութիւն ըերող, մէջքի կողմից երեք բոյսեր (ծա՞ռ, ծաղի՞կ). յամենայն դէպս նման երեւոյթ ուրիշ կենդանիների հետ յատուկ է սասանեան կամ նորա ազդեցութեան ենթակայ մնացորդների վերայ:* Եօթներորդը երկու Փիղուր, այլ և կին, բռնած խաչագլուխ ձողից, որպիսին եւ Օձունի վերայ տեսանք, հաւանօրէն հանդուցեալ ամուսինները: Տասնումէկերորդը Ծնունդը՞, շատ աղօտ, քարայրը ներկայացրած է չորս պայտաձեւ կամարների շարքով: Կարին մի Փիղուր՝ փչացած: Տասնեւչորսերորդը այլ ձեւի խաչ, փչացած: Մնացածը կոտրուած է. դժուար է ասել, թէ որքան բարձր էր, հաւանօրէն, ոչ շատ: Այս երեսին եւս, պատուանդանի վերայ հաւասարակող եւ կոթաւոր մի խաչ կայ, երկգիծ բոլորակ շրջանակի մէջ տնուած:



Պատկ. 53

Բայց եկեղեցու եւ տեղի հնութեան յայտարար է եւ մի ուրիշ մնացորդ, հաւանական ենք համարում դերեզմանական մի այլ ձեւի կոթողի մնացորդ, անջատ սիւնի մի բեկոր խոյակով վերջացած, բայց խոյակի վերան էլ եղել է մի բան, վերին մասի փորուածքից դատելով, դժուար կռահելի, թէ ի՞նչ էր այն, խաչ արդեօ՞ք: Կոթողների ձեւի եւ նրանց վերջաւորութեան մասին, կը խօսինք յետոյ, այստեղ մեզ հետաքրքրում են առ այժմ նրանց քանդակները, որ երեւում են նաեւ ասորական՝ Ե.–Զ. դարի քանդակագործութեան մէջ, այսինքն վեցթեւեան խաչեր բոլորակ շրջանակի մէջ,** նաեւ արմաւենիկի ոլորապտոյտը եւ շուշանածաղիկը, ինչպէս Տիկորի եկեղեցու եւ Օձունի կոթողի վերայ:

---

*Տես Pope, 204, 208, 232 պատկերները:

**Strzygowski. L'ancien Art Chrétien, Paris, 1936. p. 87-88: